

Կ-485-24.02.2020-ՖՎ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 4-րդ մասում «678» թիվը փոխարինել «682» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 609-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 628-րդ հոդվածում «ֆինանսական վարձակալություն» բառերը փոխարինել «լիզինգ» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ պարագրաֆը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«§6 . ԼԻԶԻՆԳ

Հոդված 677. Լիզինգ

1. Լիզինգի պայմանագրով՝ լիզինգատուն պարտավորվում է լիզինգառուի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել լիզինգառուի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը: Այդ դեպքում լիզինգատուն պատասխանատվություն չի կրում լիզինգի առարկայի և վաճառողի ընտրության համար:
2. Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է լիզինգատուն:
3. Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ լիզինգով տրամադրված գույքը, լիզինգի ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնում է լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:
4. Լիզինգատուն, լիզինգառուի համար գույք ձեռք բերելիս վաճառողին գրավոր ծանուցում է, որ գույքը նախատեսված է որոշակի անձի լիզինգով տրամադրելու համար:
5. Լիզինգի տարատեսակներն են հետադարձ լիզինգը, երկրորդային լիզինգը:

6. Լիզինգի գործառնություններ կարող են իրականացնել բանկերը կամ օրենքով սահմանված կարգով թույլտվություն (լիցենզիա) ստացած մասնագիտացված կազմակերպությունները:

Հոդված 678. Վաճառողի և լիզինգատուի պատասխանատվությունը

1. Լիզինգի պայմանագրով լիզինգատուն իրավունք ունի գույքի որակի ու կոմպլեկտայնության, դրա մատակարարման ժամկետները խախտելու և վաճառողի կողմից պայմանագիրն անպատշաճ կատարելու դեպքերում անմիջականորեն վաճառողին ներկայացնել նրա և լիզինգատուի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներ: Ընդ որում, լիզինգատուն ձեռք է բերում գնորդի համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և կրում է նրա պարտականությունները, բացի վաճառողի հետ առուվաճառքի պայմանագիրն առանց լիզինգատուի համաձայնության լուծելու իրավունքից ու ձեռք բերված գույքի համար վճարելու պարտականությունից:
2. Լիզինգատուն և լիզինգատուն վաճառողի հետ հարաբերություններում համիրավ պարտատերեր են (հոդված 365):
3. Եթե այլ բան նախատեսված չէ լիզինգի պայմանագրով, լիզինգատուն լիզինգատուի առջև պատասխանատվություն չի կրում առուվաճառքի պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրված է լիզինգատուի վրա: Վերջին դեպքում լիզինգատուն իրավունք ունի իր ընտրությամբ առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներն անմիջականորեն ներկայացնել ինչպես գույքը վաճառողին, այնպես էլ լիզինգատուին, որոնք համապարտ պատասխանատվություն են կրում լիզինգատուի առջև:
4. Լիզինգատուի փոփոխության դեպքում, լիզինգի առարկայի նկատմամբ վաճառողին պահանջ ներկայացնելու իրավունքները անցնում են նոր լիզինգատուին, իսկ ենթալիզինգի դեպքում ենթալիզինգատուին: Այս դեպքում լիզինգատուն տանսիինգօրյա ժամկետում պարտավոր է գրավոր ծանուցել վաճառողին նոր լիզինգատուի կամ ենթալիզինգատուի մասին:

Հոդված 679. Հետադարձ լիզինգ

1. Հետադարձ լիզինգի պայմանագիրը երկկողմ պայմանագիր է, որով լիզինգատուն պարտավորվում է վճարի դիմաց լիզինգատուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել նրանից սեփականության իրավունքով ձեռքբերված գույքը:
2. Հետադարձ լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ լիզինգով տրամադրված գույքը, լիզինգի ժամկետի լրանալուց հետո կամ մինչև դրա

լրանալը, կրկին անցնում է լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

Հոդված 680. Երկրորդային լիզինգ

1. Երկրորդային լիզինգը՝ լիզինգի պայմանագրի դադարման, վաղաժամկետ դադարեցման կամ լուծման արդյունքում լիզինգատուին վերադարձված լիզինգի առարկայի կրկին հանձնումն է նոր լիզինգառուի տիրապետմանը և օգտագործմանը: Երկրորդային լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել լիզինգի առարկայի սեփականության իրավունքի փոխանցում լիզինգառուին:
2. Երկրորդային լիզինգի պայմանագիրը երկկողմ պայմանագիր է՝ լիզինգատուի և լիզինգառուի միջև:
3. Երկրորդային լիզինգի ժամանակ լիզինգառուին է անցնում վաճառողին և լիզինգատուին լիզինգի առարկայի նկատմամբ պահանջ ներկայացնելու իրավունքը՝ սույն օրենսգրքի 678-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 681. Ենթալիզինգ և վարձակալություն

1. Այն դեպքում, երբ լիզինգի պայմանագրով լիզինգառու է հանդիսանում բանկը կամ սույն օրենսգրքի 677-րդ հոդվածի 6-րդ մասում նշված մասնագիտացված կազմակերպությունները, լիզինգառուն /ենթալիզինգատուն/ իրավունք ունի լիզինգի պայմանագրի պայմաններին համապատասխան վճարի դիմաց լիզինգի առարկան փոխանցել այլ անձի՝ ենթալիզինգառուի տիրապետմանը և օգտագործմանը:
2. Լիզինգի առարկան ենթալիզինգով փոխանցման համար լիզինգատուի գրավոր համաձայնությունը պարտադիր է:
3. Ենթալիզինգի դեպքում լիզինգառուն չի ազատվում լիզինգի պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից:
4. Ենթալիզինգի պայմանագիրը չի կարող կնքվել լիզինգի պայմանագրի ժամկետը գերազանցող ժամկետով:
5. Ենթալիզինգի պայմանագրի նկատմամբ կիրառվում են լիզինգի պայմանագրի կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:
6. Լիզինգառուն, որը չի հանդիսանում բանկ կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված մասնագիտացված կազմակերպություն, իրավունք ունի լիզինգի առարկան տրամադրելու վարձակալության, միայն լիզինգատուի գրավոր համաձայնությամբ լիզինգի պայմանագրի պայմաններին պահպանման պարագայում:

Հոդված 682. Լիզինգի պայմանագրի ձևը

1. Լիզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր սույն օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

2. Անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 683. Լիզինգի պայմանագրից ծագող իրավունքների գրանցումը

1. Անշարժ գույքի լիզինգի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
2. Շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 684. Լիզինգի պայմանագրի առարկան

1. Լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել, լիզինգի պայմանագրով հստակ և որոշակի սահմանված, ցանկացած չսպառվող գույք:
2. Լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում, լիզինգատուն իրավունք ունի պայմանագրով սահմանված կարգով հսկողություն իրականացնել լիզինգի առարկայի օգտագործման նկատմամբ, այդ թվում նաև ենթալիզինգի և վարձակալության դեպքում:

Հոդված 684.1. Լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը

1. Լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնված լիզինգի առարկան հանդիսանում է լիզինգատուի սեփականությունը:
2. Լիզինգի առարկայի տիրապետման և օգտագործման իրավունքն ամբողջ ծավալով անցնում է լիզինգառուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 684.2. Լիզինգի առարկան լիզինգառուին հանձնելը

1. Լիզինգատուն պարտավոր է լիզինգի առարկան լիզինգառուին տրամադրել լիզինգի պայմանագրի պայմաններին համապատասխան:
2. Լիզինգի առարկան տրամադրվում է լիզինգով դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 684.3. Լիզինգային վճար

1. Լիզինգային վճարը այն գումարն է, որը վճարվում է լիզինգառուի կողմից լիզինգային պայմանագրով սահմանված չափով և ժամկետներում, որը բաղկացած է՝
 - 1) լիզինգի առարկայի արժեքից (այդ թվում մինչև լիզինգի առարկայի հանձնմանը նդունման պահը կատարված նախնական վճարից) և պայմանագրով սահմանված տոկոսի գումարից, եթե լիզինգի պայմանագրով նախատեսվում է լիզինգի առարկային սեփականության իրավունքի փոխանցում լիզինգառուին;

- 2) կամ լիզինգի պայմանագրով սահմանված տոկոսի գումարից, եթե լիզինգի պայմանագրով չի նախատեսվում լիզինգի առարկայի սեփականության իրավունքի փոխանցում լիզինգառուին:

Հոդված 684.4. Լիզինգի առարկայի պահպանությունը և բարելավումները

1. Լիզինգի պայմանագիրը օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերում դադարելու կամ լուծվելու դեպքում լիզինգառուն պարտավոր է լիզինգատուին վերադարձնել գույքը լիզինգառուի կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ:
2. Լիզինգառուն պարտավոր է իր հաշվին իրականացնել լիզինգի առարկայի տեխնիկական սպասարկումը և ապահովել դրա պահպանությունը, ինչպես նաև կատարել լիզինգի առարկայի հիմնական և ընթացիկ վերանորոգումը, եթե այլ բան նախատեսված չէ լիզինգի պայմանագրով:
3. Լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հիմնական վերանորոգումը կատարում է լիզինգատուն, եթե այլ բան նախատեսված է չէ պայմանագրով:
4. Լիզինգի առարկայի բարելավումների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 626-րդ հոդվածի պահանջները:

Հոդված 684.5. Լիզինգի պայմանագրի լուծումը

1. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝
 - 1) լիզինգառուի կողմից լիզինգի առարկայի օգտագործումը չի համապատասխանում լիզինգի պայմանագրի պայմաններին կամ լիզինգի առարկայի նշանակությանը,
 - 2) լիզինգառուն խոչընդոտում է լիզինգատուին իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի նկատմամբ,
 - 3) լիզինգառուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում պարբերաբար կամ ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել պայմանագրով սահմանված լիզինգային վճարի հերթական գումարը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
2. Լիզինգառուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝
 - 1) Լիզինգատուն լիզինգառուի տիրապետմանը և օգտագործմանը չի տրամադրել լիզինգի առարկան պայմանագրով սահմանված ժամկետից 30 օր կետանցով, եթե կետանցը առաջացել է լիզինգատուի մեղքով, ինչպես նաև, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով.
 - 2) Լիզինգատուն չի իրականացրել լիզինգի առարկայի հիմնական վերանորոգումը, եթե համաձայն օրենքի կամ պայմանագրի դա վերջինիս պարտականություն է:

3. Լիզինգի պայմանագրով կարող են սահմանվել լիզինգատուի կամ լիզինգառուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր:
4. Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում պայմանագրի միակողմանի լուծման դեպքում բոլոր ծախսերը, կապված գույքի վերադարձման, այդ թվում՝ ապամոնտաժման, ապահովագրության և փոխադրման հետ, կրում է լիզինգառուն, իսկ սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքերում՝ լիզինգատուն, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
5. Սույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված դեպքում լիզինգառուն իրավունք ունի պահանջել հատուցելու վնասները, եթե կետանցը թույլ է տրվել այնպիսի հանգամանքներում, որոնց համար պատասխանատվություն է կրում լիզինգատուն:

Հոդված 684.6. Լիզինգի առարկայի բռնագանձումը

1. Եթե լիզինգի առարկան ծանրաբեռնված է լիզինգի իրավունքով, ապա լիզինգի առարկայի բռնագանձման դեպքում լիզինգառուն լիզինգի առարկայի նկատմամբ պահպանում է իր իրավունքները լիզինգի պայմանագրում նշված ծավալով և ժամկետներում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

[Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք](#)

Երկրորդ ընթերցում
Կ-485-24.02.2020-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 299-րդ հոդվածի 4-րդ մասում «678» թիվը փոխարինել «682» թվով:

Հոդված 2. Օրենսգրքի 609-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 628-րդ հոդվածում «ֆինանսական վարձակալություն» բառերը փոխարինել «լիզինգ» բառով:

Հոդված 4. Օրենսգրքի 35-րդ գլխի 6-րդ պարագրաֆը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«§6 . ԼԻԶԻՆԳ

Հոդված 677. Լիզինգ

7. Լիզինգի պայմանագրով՝ լիզինգատուն պարտավորվում է լիզինգատուի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել լիզինգատուի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել լիզինգատուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը: Այդ դեպքում լիզինգատուն պատասխանատվություն չի կրում լիզինգի առարկայի և վաճառողի ընտրության համար:
8. Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է լիզինգատուն:
9. Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ լիզինգով տրամադրված գույքը, լիզինգի ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնում է լիզինգատուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:
10. Լիզինգատուն, լիզինգատուի համար գույք ձեռք բերելիս վաճառողին գրավոր ծանուցում է, որ գույքը նախատեսված է որոշակի անձի լիզինգով տրամադրելու համար:
11. Լիզինգի տարատեսակներն են հետադարձ լիզինգը, երկրորդային լիզինգը:
12. Լիզինգայի ~~գործունեություն—գործառնություններ~~ կարող են իրականացնել բանկերը կամ օրենքով սահմանված կարգով ~~նման—գործունեություն~~ ~~իրականացնելու—~~թույլտվություն (լիցենզիա) ստացած մասնագիտացված կազմակերպությունները:

~~12.~~

Հոդված 678. ~~Լիզինգի—պայմանագրով—վ~~վաճառողի և լիզինգատուի պատասխանատվությունը

5. Լիզինգի պայմանագրով լիզինգատուն իրավունք ունի գույքի որակի ու կոմպլեկտայնության, դրա մատակարարման ժամկետները խախտելու և վաճառողի կողմից պայմանագիրն անպատշաճ կատարելու դեպքերում անմիջականորեն վաճառողին ներկայացնել նրա և լիզինգատուի միջև կնքված առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներ: Ընդ որում, լիզինգատուն ձեռք է բերում գնորդի համար սույն օրենսգրքով նախատեսված իրավունքները և կրում է նրա պարտականությունները, բացի վաճառողի հետ առուվաճառքի պայմանագիրն առանց լիզինգատուի համաձայնության լուծելու իրավունքից ու ձեռք բերված գույքի համար վճարելու պարտականությունից:
6. Լիզինգատուն և լիզինգատուն վաճառողի հետ հարաբերություններում համիրավ պարտատերեր են (հոդված 365):
7. Եթե այլ բան նախատեսված չէ լիզինգի պայմանագրով, լիզինգատուն լիզինգատուի առջև պատասխանատվություն չի կրում առուվաճառքի

պայմանագրից բխող պահանջները վաճառողի կողմից չկատարելու համար, բացառությամբ այն դեպքի, երբ վաճառող ընտրելու պատասխանատվությունը դրված է լիզինգատուի վրա: Վերջին դեպքում լիզինգատուն իրավունք ունի իր ընտրությամբ առուվաճառքի պայմանագրից բխող պահանջներն անմիջականորեն ներկայացնել ինչպես գույքը վաճառողին, այնպես էլ լիզինգատուին, որոնք համապարտ պատասխանատվություն են կրում լիզինգատուի առջև:

8. Լիզինգատուի փոփոխության դեպքում, լիզինգի առարկայի նկատմամբ վաճառողին պահանջ ներկայացնելու իրավունքները անցնում են նոր լիզինգատուին, իսկ ենթալիզինգի դեպքում ենթալիզինգատուին: Այս դեպքում լիզինգատուն տանսհինգորյա ժամկետում պարտավոր է գրավոր ծանուցել վաճառողին նոր լիզինգատուի կամ ենթալիզինգատուի մասին:

Հոդված 679. Հետադարձ լիզինգ

3. Հետադարձ լիզինգի պայմանագիրը երկկողմ պայմանագիր է, որով լիզինգատուն պարտավորվում է վճարի դիմաց լիզինգատուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել նրանից սեփականության իրավունքով ձեռքբերված գույքը:
4. Հետադարձ լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ լիզինգով տրամադրված գույքը, լիզինգի ժամկետի լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը, կրկին անցնում է լիզինգատուի սեփականությանը՝ վերջինիս կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:

Հոդված 680. Երկրորդային լիզինգ

4. Երկրորդային լիզինգը՝ լիզինգի պայմանագրի դադարման, վաղաժամկետ դադարեցման կամ լուծման արդյունքում լիզինգատուին վերադարձված լիզինգի առարկայի կրկին հանձնումն է նոր լիզինգատուի տիրապետմանը և օգտագործմանը: Երկրորդային լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել լիզինգի առարկայի սեփականության իրավունքի փոխանցում լիզինգատուին:
5. Երկրորդային լիզինգի պայմանագիրը երկկողմ պայմանագիր է՝ լիզինգատուի և լիզինգատուի միջև:
6. Երկրորդային լիզինգի ժամանակ լիզինգատուին է անցնում վաճառողին և լիզինգատուին լիզինգի առարկայի նկատմամբ պահանջ ներկայացնելու իրավունքը՝ սույն օրենսգրքի 678-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 681. Ենթալիզինգ և վարձակալություն

7. Այն դեպքում, երբ լիզինգի պայմանագրով լիզինգատու է հանդիսանում բանկը կամ սույն օրենսգրքի 677-րդ հոդվածի 6-րդ մասում նշված՝ մասնագիտացված կազմակերպությունները, լիզինգատուն /ենթալիզինգատուն/ իրավունք ունի լիզինգի պայմանագրի պայմաններին համապատասխան վճարի դիմաց լիզինգի առարկան փոխանցել այլ անձի՝ ենթալիզինգատուի տիրապետմանը և օգտագործմանը: ~~Լիզինգի առարկան ենթալիզինգի հանձնման դեպքում վաճառողին պահանջի ներկայացման իրավունքն ըստ ենթալիզինգի պայմանագրի անցնում է ենթալիզինգատուին:~~
8. Լիզինգի առարկան ենթալիզինգով փոխանցման համար լիզինգատուի գրավոր համաձայնությունը պարտադիր է:
9. Ենթալիզինգի դեպքում լիզինգատուն չի ազատվում լիզինգի պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից:
10. Ենթալիզինգի պայմանագիրը չի կարող կնքվել լիզինգի պայմանագրի ժամկետը գերազանցող ժամկետով:
11. Ենթալիզինգի պայմանագրի նկատմամբ կիրառվում են լիզինգի պայմանագրի կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:
12. Լիզինգատուն, որը չի հանդիսանում բանկ կամ սույն հոդվածի 1-ին մասում նշված մասնագիտացված կազմակերպություն, իրավունք ունի լիզինգի առարկան տրամադրելու վարձակալության, միայն լիզինգատուի գրավոր համաձայնությամբ լիզինգի պայմանագրի պայմաններին պահպանման պարագայում:

Հոդված 682. Լիզինգի պայմանագրի ձևը

3. Լիզինգի պայմանագիրը կնքվում է գրավոր սույն օրենսգրքի 450 հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:
4. Անշարժ գույքի լիզինգի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

Հոդված 683. Լիզինգի պայմանագրից ծագող իրավունքների գրանցումը

3. Անշարժ գույքի լիզինգի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Շարժական գույքի լիզինգի պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Հոդված 684. Լիզինգի պայմանագրի առարկան

3. Լիզինգի պայմանագրի առարկա կարող է լինել, լիզինգի պայմանագրով հստակ և որոշակի սահմանված, ցանկացած չսպառվող գույք:
4. Լիզինգի պայմանագրի գործողության ընթացքում, լիզինգատուն իրավունք ունի պայմանագրով սահմանված կարգով հսկողություն իրականացնել լիզինգի առարկայի օգտագործման նկատմամբ, այդ թվում նաև ենթալիզինգի և ~~ենթա~~վարձակալության դեպքում:

Հոդված 684.1. Լիզինգի առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը

3. Լիզինգատուի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնված լիզինգի առարկան հանդիսանում է լիզինգատուի սեփականությունը:
4. Լիզինգի առարկայի տիրապետման և օգտագործման իրավունքն ամբողջ ծավալով անցնում է լիզինգատուին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 684.2. Լիզինգի առարկան լիզինգատուին հանձնելը

3. Լիզինգատուն պարտավոր է լիզինգի առարկան լիզինգատուին տրամադրել լիզինգի պայմանագրի պայմաններին համապատասխան:
4. Լիզինգի առարկան տրամադրվում է լիզինգով դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն), եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 684.3. Լիզինգային վճար

2. Լիզինգային վճարը այն գումարն է, որը վճարվում է լիզինգատուի կողմից լիզինգային պայմանագրով սահմանված չափով և ժամկետներում, որը բաղկացած է՝
 - 1) լիզինգի առարկայի արժեքից (այդ թվում մինչև լիզինգի առարկայի հանձնմանը նդունման պահը կատարված նախնական վճարից) և պայմանագրով սահմանված տոկոսի գումարից, եթե լիզինգի պայմանագրով նախատեսվում է լիզինգի առարկային սեփականության իրավունքի փոխանցում լիզինգատուին;
 - 2) կամ լիզինգի պայմանագրով սահմանված տոկոսի գումարից, եթե լիզինգի պայմանագրով չի նախատեսվում լիզինգի առարկայի սեփականության իրավունքի փոխանցում լիզինգատուին:

Հողված 684.4. Լիզինգի առարկայի պահպանությունը և բարելավումները

5. Լիզինգի պայմանագիրը օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերում դադարելու կամ լուծվելու դեպքում լիզինգատուն պարտավոր է լիզինգատուին վերադարձնել գույքը լիզինգատուի կողմից ստացված վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ:
6. Լիզինգատուն պարտավոր է իր հաշվին իրականացնել լիզինգի առարկայի տեխնիկական սպասարկումը և ապահովել դրա պահպանությունը, ինչպես նաև կատարել լիզինգի առարկայի հիմնական և ընթացիկ վերանորոգումը, եթե այլ բան նախատեսված չէ լիզինգի պայմանագրով:
7. Լիզինգի առարկա հանդիսացող անշարժ գույքի հիմնական վերանորոգումը կատարում է լիզինգատուն, եթե այլ բան նախատեսված է չէ պայմանագրով:
8. Լիզինգի առարկայի բարելավումների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 626-րդ հոդվածի պահանջները:

Հողված 684.5. Լիզինգի պայմանագրի լուծումը

6. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝
 - 4) լիզինգատուի կողմից լիզինգի առարկայի օգտագործումը չի համապատասխանում լիզինգի պայմանագրի պայմաններին կամ լիզինգի առարկայի նշանակությանը,
 - 5) լիզինգատուն խոչընդոտում է լիզինգատուին իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի նկատմամբ,
 - 5) ~~եթե լիզինգատուն սահմանափակում է լիզինգատուի հսկողության իրավունքը լիզինգի առարկայի նկատմամբ,~~
 - 6) լիզինգատուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում պարբերաբար կամ ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել պայմանագրով սահմանված լիզինգային վճարի հերթական գումարը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
 - 6) ~~լիզինգատուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել լիզինգային վճարի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:~~
7. Լիզինգատուի պահանջով լիզինգի պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել, եթե՝
 - 3) Լիզինգատուն լիզինգատուի տիրապետմանը և օգտագործմանը չի տրամադրել լիզինգի առարկան պայմանագրով սահմանված ժամկետից 30 օր կետանցով, եթե կետանցը առաջացել է լիզինգատուի մեղքով, ինչպես նաև, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով.
 - 4) Լիզինգատուն չի իրականացրել լիզինգի առարկայի հիմնական վերանորոգումը, եթե համաձայն օրենքի կամ պայմանագրի դա վերջինիս պարտականություն է:

8. Լիզինգի պայմանագրով կարող են սահմանվել լիզինգատուի կամ լիզինգատուի պահանջով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու այլ հիմքեր:
9. Սույն հոդվածի առաջին մասում նշված դեպքերում պայմանագրի միակողմանի լուծման դեպքում բոլոր ծախսերը, կապված գույքի վերադարձման, այդ թվում՝ ապամոնտաժման, ապահովագրության և փոխադրման հետ, կրում է լիզինգատուն, իսկ սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքերում՝ լիզինգատուն, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
10. Սույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված դեպքում լիզինգատուն իրավունք ունի պահանջել հատուցելու վնասները, եթե կետանցը թույլ է տրվել այնպիսի հանգամանքներում, որոնց համար պատասխանատվություն է կրում լիզինգատուն:

Հոդված 684.6. Լիզինգի առարկայի բռնագանձումը

2. Եթե լիզինգի առարկան ծանրաբեռնված է լիզինգի իրավունքով, ապա լիզինգի առարկայի բռնագանձման դեպքում լիզինգատուն լիզինգի առարկայի նկատմամբ պահպանում է իր իրավունքները լիզինգի պայմանագրում նշված ծավալով և ժամկետներում:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից: ~~Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱ-
 ՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ և ԲԱՆԿԱՅԻՆ
 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ», «ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ
 ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
 «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-485-24.02.2020-ՖՎ-011/1)
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

N°	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներ	1. 4-րդ հոդվածով փոփոխվող՝ 1) 677-րդ հոդվածի 3-րդ մասում «վաճառողին» բառից հետո լրացնել «գրավոր» բառը; 2) 677-րդ հոդվածի 6-րդ մասում «լիզինգային գործունեություն» բառերը փոփոխել «լիզինգի գործառնություններ»	Ընդունվել են, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

			<p>բառերով, ինչպես նաև հանել «նման գործունեություն իրականացնելու» բառերը;</p> <p>3) 678-րդ հոդվածի անվանումից հանել «Լիզինգի պայմանագրով» բառերը, 4-րդ մասը «լիզինգառուին» բառից հետո լրացնել «,իսկ ենթալիզինգի դեպքում ենթալիզինգառուին» բառերով, ինչպես նաև «լիզինգառուի» բառից հետո լրացնել «կամ ենթալիզինգառուի» բառերը;</p> <p>4) 681-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում «հանդիսանում» բառից հետո համապատասխանաբար լրացնել «բանկը կամ», «բանկ կամ» բառերը, ինչպես նաև հանել 1-ին մասի վերջին նախադասությունը;</p> <p>5) 684-րդ հոդվածի 2-րդ մասում «ունի» բառից հետո լրացնել «պայմանագրով սահմանված կարգով» բառերը, ինչպես նաև «ենթավարձակալության» բառը փոփոխել «վարձակալության» բառով:</p> <p>6) 684.5 հոդվածի 1-ին մասի 2)-րդ և 3)-րդ կետերը փոփոխել և խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝</p> <p>«2) լիզինգառուն խոչընդոտում է լիզինգատուին իրականացնելու հսկողություն լիզինգի առարկայի</p>		
--	--	--	---	--	--

			<p>նկատմամբ, 3) լիզինգառուն լիզինգի պայմանագրով սահմանված ժամկետում պարբերաբար կամ ավելի քան երկու անգամ անընդմեջ չի վճարել պայմանագրով սահմանված լիզինգային վճարի հերթական գումարը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:»:</p> <p>2. 5-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>		
2.	ՀՀ կառավարություն	<p>«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված</p>	<p>2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
3.	ՀՀ կառավարություն	<p>«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 3-րդ</p>	<p>3-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:</p>	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

		հողված			
4.	ՀՀ կառավարություն	Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
5.	ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:»:	Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ	
6.	ՀՀ կառավարություն	Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	1) 5-րդ հոդվածում «8» թիվը փոփոխել «4.1.» թվով: 2) 6-րդ և 10-րդ հոդվածներում «տոկոսների» բառը փոփոխել «տոկոսի գումարների» բառերով:	Ընդունվել են, կատարվել են համապատասխան փոփոխություններ	

		<p>մասին ՀՀ օրենքի նախագծի՝</p>	<p>3) 8-րդ հոդվածի գ) կետում «ժե» տառերը փոփոխել «ի» տառով, ինչպես նաև «ժգ» տառերը փոփոխել «իա» տառերով:</p> <p>4) 12-րդ հոդվածի 2)-րդ կետում «համարվում» բառից հետո լրացնել «այդ հարկ վճարողի մոտ» բառերով:</p> <p>5) 22-րդ հոդվածից հանել «հարկ վճարողներին» բառերը:</p> <p>6) 23-րդ հոդվածում «անշարժ գույքի» բառերը փոփոխել «փոխադրամիջոցների» բառով, ինչպես նաև հանել «հարկ վճարողներին» բառերը:</p> <p>Նախագիծը լրացնել հետևալ բովանդակությամբ նոր 24-րդ հոդվածով՝</p> <p>«Հոդված 24. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 4.1-ին կետով սահմանված լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտ՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ, կարող է դուրս գրվել նաև ոչ էլեկտրոնային եղանակով:»:</p>		
--	--	--	--	--	--